,,Հետ-Ռիո+20,, ,,Կայուն քաղաքներ/կանաչ ճարտարապետության զարգացում,,

ենթահանձնաժողովի քարտուղար՝

Նաիրա Սարգսյանին

Քաղաքների և այլ բնակավայրերի բնականոն զարգացման հայեցակարգի ձևավորման ներկայիս գլխավոր խնդիրը կայանում է ոլորտում տիրող համատարած ապորինությունների դեմ օրենսդրական կանխարգելիչ միջոցների ներդրումն է, որից հետո միայն պետք է կատարել որոշակի անդրադարձումներ բովանդակային հետևյալ խնդիրներին:

1. Քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման գործառույթի պարտադիր պետականացում:
2. Բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի միասնական կադաստրի ձևավորում, քաղաքաշինական ընթացիկ ծրագրերի և իրականացվող կառուցապատման թափանցելիության ապահովում, կադաստրային հերթապահ քարտեզների վարում:
3. Բնակավայրերում ձևավորված պատմաճարտարապետական ժառանգության և հանրային օգտագործման կանաչ տարածքների պահպանման հռչակումը , որպես քաղաքաշինության անզիջելի պարտադրանք:
4. Քաղաքաշինական գործառույթների նկատմամբ խստացված վերահսկողության իրականացում:
5. Քաղաքաշինական իրավախախտումների հանդեպ վարչական և քրեական օրենսդրական դրույթների մանրամասեցում, հստակեցում և խստացում :

Թվարկված երաշխիքների բացակայության պարագայում բնակավայրի կայուն զարգացման մասին զրույցը՝ պարապ ժամանց է:

Հարգանքներով

ՀՃՄ Նախագահ՝
Մկրտիչ Մինասյան

,,Հայնախագիծ,,ԲԲԸ
Գլխ. մասնագետ՝
Սաշուր Քալաշյան

18. մարտի 2014թ.